

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

НАЦИОНАЛЬНЫЙ УНИВЕРСИТЕТ  
АРХИТЕКТУРЫ И СТРОИТЕЛЬСТВА  
АРМЕНИИ

ЦЕНТР ПО ОБЕСПЕЧЕНИЮ КАЧЕСТВА  
ОБРАЗОВАНИЯ



MINISTRY OF EDUCATION AND  
SCIENCE OF THE REPUBLIC OF ARMENIA

NATIONAL UNIVERSITY OF  
ARCHITECTURE AND CONSTRUCTION  
OF ARMENIA

CENTER OF EDUCATION  
QUALITY ASSURANCE

5 մարտի 2016թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2016 թվականի հունվար-փետրվար ամիսներին անցկացված  
ուսանողների կողմից մասնագիտական առարկաների դասընթացների  
գնահատման արդյունքների մասին

1. Նախարան

ՃՀՀԱՀ-ի Կրթության որակի ապահովման կենտրոնը (այսուհետ Որակի կենտրոն) 2016 թվականի գործողությունների պլանով նախատեսված՝ կրթության որակի ապահովմանն ուղղված միջոցառումների շրջանակներում՝ սույն թվականի հունվար-փետրվար ամիսներին համալսարանի հինգ ֆակուլտետների թվով 8 թողարկող ամբիոններում անց է կացրել ուսանողների հարցումներ անանուն հարցաթերթի կիրառմամբ (կցված է Հավելվածում 1-ում)՝ 15 մասնագիտական առարկաների դասընթացների վերաբերյալ ուսանողների կարծիքների բացահայտման նպատակով:

Անցկացված հարցումների վիճակագրական տվյալներն են (Հավելված 2-ում ներկայացված են ավելի մանրամասն տվյալներ).

- Հարցմանը ներգրավված ֆակուլտետների թիվը՝ 5,
- Հարցմանը ներգրավված թողարկող ամբիոնների թիվը՝ 8,
- Գնահատման ենթարկված մասնագիտական առարկաների թիվը՝ 15,
- Հարցմանը ներգրավված ակադեմիական խմբերի թիվը՝ 32,
- Ներգրավված ակադեմիական խմբերի ուսանողների ընդհանուր թիվը՝ 550,
- Ներգրավված ակադեմիական խմբերի հարցմանը մասնակցած ուսանողների թիվը՝ 330 (կամ 60 %):

2. Ուսանողների հարցման նպատակները

Ուսանողների հարցումներն ունենին հետևյալ նպատակները.

1. ուսանողների մասնագիտական առարկայական դասընթացների բավարարվածության չափում,

2. դասախոսներին դասընթացների վարման մեթոդաբանության, բովանդակության մեջ ճշգրտումներ մտցնելու, ինքնակատարելագործվելու, դասավանդման որակի բարձրացման հնարավորության տրամադրում՝ ուսանողներից ստացված կարծիքների հիման վրա:

### 3. Ուսանողների հարցման գործընթացի կազմակերպումը

Հարցումների համար նախատեսված մասնագիտական առարկաների ցանկը առաջարկվել էր ՃՇՀԱՀ-ի բոլոր 5 ֆակուլտետների դեկանների կողմից:

Մասնագիտական առարկաների դասընթացների վերաբերյալ ուսանողների հարցումներն անց են կացվել ֆակուլտետների և ամբիոնների աշխատակիցների աջակցությամբ՝ նախապես մշակված և ՃՇՀԱՀ-ի բոլոր 5 ֆակուլտետների դեկանների հետ համաձայնեցված ժամանակացույցի հիման վրա (Հավելված 2):

Ուսանողների հարցումներն անց են կացվել Որակի կենտրոնի աշխատակիցների կողմից առանձին ակադեմիական խմբերում, ըստ վերը նշված ժամանակացույցում նախանշված օրվա, ժամի և լսարանի՝ պահպանելով ուսանողների կողմից անանուն հարցաթերթերի լրացման կամավորության սկզբունքը (Նկար 1): Ուսանողները տվել են իրենց գնահատականները հարցաթերթում նշված հարցերի շուրջ՝ հինգ նիշ պարունակող սանդղակի կիրառմամբ (4 – շատ լավ գնահատական, 3 – ավելի մոտ լավ գնահատականին, 2- ավելի մոտ վատ գնահատականին, 1-շատ վատ գնահատական, 0-չեն կարող պատասխանել):

Նկար 1. Ճարտարապետության ֆակուլտետի 2016թ. հունվարի 27-ին՝ Ճ 21-1 և Ճ 21-2 խմբերում անցկացված հարցումների գործընթացը:



Հարցման արդյունքների ճշտությունը ապահովվելու նպատակով հարցմանը պետք է մասնակցեին ակադեմիական խմբի ուսանողների ընդհանուր թվի մոտ 50%-ը: Հարցմանը ներգրավված 32 ակադեմիական խմբերի ուսանողների ընդհանուր թիվը կազմել էր 550 ուսանող, որոնցից հարցումներին մասնակցեցին 330 ուսանողներ կամ ուսանողների ընդհանուր թվի 60%-ը: Ըստ առանձին խմբերի այս հարաբերակցությունը փոփոխվում էր, սակայն խմբերի մեծամասնությունում հարցմանը մասնակցած ուսանողների թիվը մոտենում էր 50%-ին կամ գերազանցում էր այն (նայիր Հավելված 2-ի աղյուսակը): Այս պայմանի ապահովումը թույլ տվեց համարել, որ ստացված արդյունքները հուսալի են և կարող են հիմք դառնալ հետագա վերլուծություններ և

եզրահանգումներ կատարելու համար:

#### 4. Ուսանողների հարցման արդյունքների ամփոփում

Ուսանողների հարցումների արդյունքում հարցաթերթերից ստացված տվյալները թվայնացվել են Որակի կենտրոնի աշխատակցի (Մ. Բալայանի) կողմից: Թվայնացված տվյալների հիման վրա հաշվարկվել են ուսանողների միջին գնահատականները հարցաթերթում նշված յուրաքանչյուր հարցի շուրջ: Ուսանողների կողմից տրված միջինացված գնահատականները, ըստ առանձին մասնագիտական առարկաների դասընթացների, բերված են Հավելված 3-ի աղյուսակներում:

#### 5. Եզրակացություններ և առաջարկություններ

5.1. Ուսանողների միջինացված գնահատականները հարցաթերթում ներառված հարցերի վերաբերյալ, ըստ առանձին մասնագիտական առարկաների, ամփոփ տեսքով ներկայացված են ստորև բերված աղյուսակ 1-ում: Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, ուսանողների ընդհանուր գնահատականը մասնագիտական առարկաների դասընթացների վերաբերյալ բավականին բարձր է, բացառությամբ մի քանի առարկաների (հաշվապահական հաշվառում շինարարության ոլորտում, դիզայն նախագիծ, ճարտարապետական կոնստրուկցիաներ): Գնահատականների շարքի միջին գնահատականը 3,5 է՝ (նայիր աղյուսակ 1-ի սյունյակ 1): 15 առարկաների դասընթացներից՝ 8-ը գնահատվել են 3,5 և դրանից բարձր գնահատականներով:

5.2. Հինգ առարկաների դեպքում (կամ 33 %) դասընթացի ընդհանուր գնահատականը տրվել է «4» կամ «զերազանց»: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ «զերազանց» միջինացված գնահատականի դեպքում բացահայտվել են, մեր տեսանկյունից, անբացատրելի անհամապատասխանություններ՝ համեմատած մնացած հարցերի պատասխանների հետ: Մասնավորապես, դասընթացի «զերազանց» միջինացված գնահատականը պետք է բացառեր ավելի ցածր գնահատականներ առնվազն «Ուսուցման մեթոդները՝ դասախոսությունները, գործնական պարապմունքները, առաջադրանքները խթանում էին ակնկալվող գիտելիքների և հմտությունների ձեռք բերումը» (սյունյակ 4) հարցի դեպքում: Մակայն մի շարք առարկաների դեպքում դրանք բավականին ցածր էին՝ չնայած դասընթացի ընդհանուր գնահատականը զերազանց էր: Մասնավորապես խոսքը վերաբերվում է հետևյալ առարկաների դասընթացների գնահատմանը

- ✓ Ե/բ կոնստրուկցիաների – 3,9
- ✓ Հողային և բազմանպատակային կադաստր -3,5
- ✓ Բարձրագույն գեոդեզիա – 2,8
- ✓ ՃԷԿ տեխնիկական միջոցներ – 3,2
- ✓ Էկոլոգիական փորձաքննություն – 3,0

5.3. Մտահոգում են «Հաշվապահական հաշվառում շինարարության ոլորտում» առարկայի դասընթացների ցածր գնահատականները բոլոր հարցերի վերաբերյալ: Կարծում ենք այս արդյունքները կպահանջեն լրացուցիչ ուսումնասիրություն թողարկող ամբիոնում՝ նման ցածր գնահատականների պատճառները բացահայտելու նպատակով:

5.4. «Դիզայն նախագիծ» առարկայի դեպքում հատկանշական է, որ բավականին ցածր են ուսանողների կողմից տրված գնահատականները հետևյալ հարցերի շուրջ.

- ✓ դասընթացի նպատակների և վերջնարդյունքների պարզությունը (սյունյակ 3) (միջինացված գնահատականը 2,5),
- ✓ ուսուցման մեթոդների նպաստումը գիտելիքների և հմտությունների ձեռք բերմանը (սյունյակ 4) (միջինացված գնահատականը 2,4),
- ✓ դասախոսությունների և գործնականների հարաբերակցության ճիշտ կազմակերպումը (սյունյակ 5) (միջինացված գնահատականը 2,1),
- ✓ գիտելիքների գնահատման օբյեկտիվությունը և անկողմնակալությունը (սյունյակ 10) (միջինացված գնահատականը 2,0):

Վերը թվարկված հարցերին պետք է անդրադառնալ մասնագիտական ամբիոններում՝ ցածր գնահատականների պատճառները բացահայտելու նպատակով:

5.5. Ուշագրավ է այն փաստը, որ բավականին ցածր են գնահատվել ուսանողների կողմից գիտելիքներ ձեռք բերելու համար համալսարանում ստեղծված պայմանները (սյունյակ 6): Գնահատականների շարքի միջինը կազմում է՝ 2,82: 15 մասնագիտական առարկաների դասընթացներից միայն 8 առարկաների դեպքում են գնահատականները շարքի միջինից բարձր: Առանձնապես ցածր է գնահատվել այս հարցը հետևյալ առարկաների դեպքերում՝ «Ճարտարապետական կոնստրուկցիաներ» (միջինացված գնահատականը՝ 1,9), «Դիզայն նախագիծ» (միջինացված գնահատականը՝ 2,1) և «Հաշվապահական հաշվառում շինարարության ոլորտում» (միջինացված գնահատականը՝ 2,0):

5.6. Ըստ հարցաթերթերից ստացված տվյալների՝ ընտրված մասնագիտական առարկաների դասընթացները գնահատող ուսանողների հաճախելիությունը (հարցաթերթի հարց 12-ը) բավականին բարձր է՝ այն միջինում կազմում է 90,3%: Նման պատկերը բացատրվում է նրանով, որ հարցումները անցկացնելու պահին լսարանում ներկա էին հիմնականում դասընթացները կանոնավոր կերպով հաճախող ուսանողները:

5.7. Դասընթացի առաջադրանքներին պատրաստվելու համար դասից դուրս շաբաթական ուսանողները ծախսում են միջինում 8,8 ժամ (հարցաթերթի հարց 13-ը): Սակայն այդ ցուցանիշը կուրսային նախագծեր և առաջադրանքներ ունեցող առարկաների դեպքերում ավելի բարձր է: Մասնավորապես՝ «Շինարարության էկոնոմիկա» առարկայի դեպքում այն կազմում է 14,8 ժամ, «Ճարտարապետական նախագծում» առարկայի դեպքում՝ 19,4 ժամ, «Ճարտարապետական կոնստրուկցիաներ» առարկայի դեպքում՝ 9,7 ժամ, «Դիզայն նախագիծ» առարկայի դեպքում՝ 12,8 ժամ, «Միջավայրի ճարտարապետություն և դիզայն նախագիծ» առարկայի դեպքում՝ 18, 8 ժամ:

5.9. Ուսանողները արտահայտել են իրենց կարծիքները դասընթացների լավագույն հատկանիշների (հարցաթերթի հարց 14-ը), ինչպես նաև դասընթացների բարելավման ուղղությունների (հարցաթերթի հարց 15-ը) վերաբերյալ: Ամփոփվել են այն առարկաների արդյունքները, որտեղ կարծիք հայտնած ուսանողների թիվը թե լավագույն հատկանիշների, թե բարելավման ուղիների վերաբերյալ գերազանցել է 50%-ը: Արդյունքներն ըստ առանձին առարկաների ներկայացված են ստորև բերված աղյուսակ 2-ում: Հետագոտված յուրաքանչյուր դասընթացի համար՝ ուսանողների ամփոփված կարծիքների հիման վրա նախատեսվում է մշակել «Դասավանդման չափորոշիչներ»:

**Աղյուսակ 1. Ուսանողների կողմից դասընթացների միջինացված գնահատականները**

Մասնագիտական առարկայի անվանումը	1-«Ինչպիսի՞ն է Ձեր ընդհանուր գնահատականը դասընթացի վերաբերյալ»	2.- «Դասընթացը կարևորում եմ իմ մասնագիտական զարգացման՝ անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ձեռք բերման տեսանկյունից»	3.- «Դասընթացի նպատակները և վերջնարդյունքները հստակ էին և ես ի սկզբանե տեղեկացվել էի դրանց մասին»	4.- «Ուսուցման մեթոդները՝ դասախոսությունները, գործնական պարապմունքները, առաջադրանքները խթանում էին ակնկալվող գիտելիքների և հմտությունների ձեռք բերումը»	5- «Դասախոսությունների և գործնական պարապմունքների հարաբերակցությունը ճիշտ էր կազմակերպված»
Ե/բ կոնստրուկցիաներ	4,0	4,0	3,9	3,9	4,0
Հոդային և բազմանպատակային կադաստր	4,0	4,0	3,5	3,3	3,8
Բարձրագույն գեոդեզիա	4,0	3,8	3,8	2,8	4,0
ՃԷԿ տեխնիկական միջոցներ	4,0	3,8	3,8	3,2	3,8
Էկոլոգիական փորձաքննություն	4,0	4,0	4,0	3,0	4,0
Անշարժ գույքի գնահատում և հարկում	3,8	4,0	3,4	3,6	3,3
Քաղաքային տնտեսության էկոնոմիկա և կառավարում	3,7	3,5	3,7	3,9	3,8
Շին.ինդ.ձեռնարկ.նախագծում	3,5	4,0	4,0	3,5	4,0
Ճարտարապետական նախագծում	3,4	3,8	3,4	3,2	2,9
Միջավայրի ճարտարապետ. և դիզայն նախագիծ	3,4	3,8	3,8	3,2	3,5
Շինարարության էկոնոմիկա	3,3	3,5	3,4	3,3	2,9
Բնապահպանության էկոնոմիկա	3,0	2,5	3,0	3,5	3,0
Ճարտարապետական կոնստրուկցիաներ	2,9	3,5	3,0	2,6	2,6
Դիզայն նախագիծ	2,7	3,4	2,5	2,4	2,1
Հաշվապահական հաշվառում շինարարության ոլորտում	2,4	2,9	1,9	1,9	1,6

Մասնագիտական առարկայի անվանումը	6-«Համալսարանում ստեղծված պայմանները բավարար էին բարձրորակ գիտելիքներ ձեռք բերելու համար»	7.- «Գործնական և լաբորատոր պարապմունքները նպաստեցին ձեռք բերված տեսական գիտելիքների ամրապնդմանը»	8. -«Քննությանը նախապատրաստվելու համար նախատեսված նյութերը համապատասխան էին և հասանելի»	9. - «Դասախոսը քաջալերում էր ուսանողների հետ ազատ հաղորդակցությունը, քննարկումները և բանավեճերը»	10.«Ուսանողների գիտելիքները գնահատվել են օբյեկտիվ և անկողմնակալ»	11.«Դասախոսը ժամանակին էր արձագանքում ուսանողների կարիքներին և խնդիրներին»
Ե/բ կոնստրուկցիաներ	3,6	3,8	4,0	4,0	4,0	3,9
Հոդային և բազմանպատակային կադաստր	3,5	4,0	4,0	4,0	4,0	4,0
Բարձրագույն գեոդեզի	3,8	4,0	4,0	4,0	3,8	3,8
ՃԷԿ տեխնիկական միջոցներ	2,8	3,3	3,7	3,7	3,8	4,0
Էկոլոգիական փորձաքննություն	3,0	4,0	4,0	4,0	4,0	3,0
Անշարժ գույքի գնահատում և հարկում	2,8	3,2	4,0	4,0	3,8	4,0
Քաղաքային տնտեսության էկոնոմիկա և կառավարում	2,9	3,8	3,9	3,8	3,7	3,9
Շին.ինդ.ձեռնարկ.նախագծում	3,0	4,0	4,0	4,0	4,0	4,0
Ճարտարապետական նախագծում	2,2	2,8	2,9	3,7	3,0	3,5
Միջավայրի ճարտարապետ. և դիզայն նախագիծ	2,7	3,3	3,5	3,7	3,2	3,6
Շինարարության էկոնոմիկա	3,1	3,1	3,6	3,5	3,4	3,6
Բնապահպանության էկոնոմիկա	3,5	2,5	3,0	4,0	4,0	2,0
Ճարտարապետական կոնստրուկցիաներ	1,9	2,3	2,7	3,1	2,7	3,1
Դիզայն նախագիծ	2,1	2,2	2,5	3,1	2,0	2,8
Հաշվապահական հաշվառում շինարարության ոլորտում	2,0	1,7	2,3	1,9	2,8	2,6

**Աղյուսակ 2. Դասընթացների լավագույն հատկանիշների և բարելավման ուղիների վերաբերյալ ուսանողների կարծիքների ամփոփում**

«Ճարտարապետական նախագծում» առարկայի դասընթացը			
Ընդհանուր վիճակագրական տվյալներ			
ակադեմիական խմբերի թիվ		4	
ուսանողների թիվ		102	
հարցմանը մասնակցած ուսանողների թիվ		58	
հարցմանը մասնակցած ուսանողների %		57%	
դասընթացի լավագույն հատկանիշները նշած ուսանողների թիվը		38 (65,5% հարցմանը մասնակցած ուսանողների թվից)	
լավագույն հատկանիշների ընդհանուր թիվը		51	
բարելավման ուղիները նշած ուսանողների թիվը		37 (63,8% հարցմանը մասնակցած ուսանողների թվից)	
նշված բարելավման ուղիների թիվը		64	
h/h	Լավագույն հատկանիշները	Կարծիք արտահայտողներ	
		թիվ	%
1.	Հրաշայի դասախոս	14	27%
2.	Դասախոսի հետ անմիջական շփում, մտքերի փոխանակում, բանավեճեր	11	22%
3.	Գիտելիքների ձեռք բերում	8	16%
4.	Ոլորտի առաջադեմ մասնագետների հետ շփումներ	8	16%
5.	Անհատական մոտեցում ուսանողի նկատմամբ, դասախոս-ուսանող կապ	5	10%
6.	Առարկան մասնագիտական է	4	8%
7.	Գիտելիքների գնահատման մոտեցում	1	2%
	Ընդամենը	51	100%
h/h	Բարելավման ուղղությունները		
1.	Լսարանային պայմանների բարելավում (համապատասխան լաբորատորիաների, ճարտարապետական ստուդիաների, ուսանողական արվեստանոցների, մակետների պատրաստման համար նախատեսված սենյակների առկայություն)	16	25,0%
2.	Համակարգիչներով զինված լսարանների քանակի ընդլայնում	13	20,3%
3.	Դասախոսությունների լսարանային ժամերի քանակի մեծացում	3	4,7%
4.	Պրակտիկ դասաժամերի քանակի մեծացում (շինարարական հրապարակների այցելություն)	3	4,7%
5.	Դասավանդման մեթոդների բարելավում (պրակտիկային մոտ նախագծերի թեմաների ընտրություն, կլաուզուրաների ավելի		

	ընդլայնված անցկացում, նախագծերում առանձին մասերով ղեկավարների առկայություն, դասախոսների մասնագիտական որակի բարձրացում, մրցույթներին մասնակցություն, արդի մեթոդների կիրառում, ժամանակակից օրինակների դիտարկում, մակետային ուսուցում, թիմային նախագծերի մշակում, նախագծերում ազատության տրամադրում)	19	29,7%
6.	Ոլորտի առաջադեմ ճարտարապետների և այլ առաջադեմ դասախոսների հետ շփումների ընդլայնում	2	3,1%
7.	Դասախոսների վարքագծի բարելավում (ուսանողի նկատմամբ անտարբերության բացառում, ստեղծագործական մթնոլորդի ձևավորում)	2	3,1%
8.	Ուսանողների գիտելիքների անկողմնակալ գնահատում	1	1,6%
9.	Այլ պայմանների բարելավում (տեղեկատվության մատչելիություն, գրադարան, անվճար հանույթներ, կոֆե)	5	7,8%
	Ընդամենը	64	100%



«Ճարտարապետական կոնստրուկցիաներ» առարկայի դասընթացը			
Ընդհանուր վիճակագրական տվյալներ			
		ակադեմիական խմբերի թիվ	4
		ուսանողների թիվ	102
		հարցմանը մասնակցած ուսանողների թիվ	58
		հարցմանը մասնակցած ուսանողների %	56,9%
		դասընթացի լավագույն հատկանիշները նշած ուսանողների թիվը	40 (կամ 68,9% հարցմանը մասնակցած ուսանողների թվից)
		նշված լավագույն հատկանիշների ընդհանուր թիվը	45
		բարելավման ուղիները նշած ուսանողների թիվը	43 (74,1% հարցմանը մասնակցած ուսանողների թվից)
		նշված բարելավման ուղիների թիվը	79
h/h	Լավագույն հատկանիշները	Կարծիք արտահայտողներ	
		թիվ	%
1.	Կարևոր գիտելիքների ձեռք բերում (ընդհանուր պատկերացում կոնստրուկցիաների մասին, ժամանակակից տեղեկատվություն, արդի խնդիրներ, մասնագիտական առարկա)	14	32,6%
2.	Լավագույն դասախոսներ (բարձր մակարդակի պրոֆեսիոնալներ, անկեղծություն ուրրտում տիրող իրավիճակի վերաբերյալ, ոգևորություն, բարձր պատասխանատվություն, դասավանդման մեթոդներ, բարձր արդյունավետություն)	13	30,2%
3.	Կուրսային նախագծերի կատարում, ձեռքով գծելու հմտության զարգացում	5	11,6%
4.	Գործնական պարապմունքներ, հետաքրքիր առաջադրանքներ	4	9,3%
5.	Անհատական մոտեցում ուսանողի նկատմամբ, «ուսանող-դասախոս» կապի առկայություն	4	9,3%
6.	Դասախոսի հետ անմիջական շփում, քննարկումներ	3	7,0%
		Ընդամենը	43
			100%
h/h	Բարելավման ուղղությունները		
1.	Գործնական և լաբորատոր պարապմունքների դասաժամերի ավելացում և մոտեցում պրակտիկ խնդիրներին (օրինակ, շենքերի կոնստրուկտիվ լուծումների հաշվարկ)	27	34,2%
2.	Դասընթացի բովանդակության նորացում ավելի ժամանակակից տեղեկատվության կիրառման ուղղությամբ, ժամանակակից կոնստրուկցիաների ուսումնասիրություն, պրակտիկ օրինակների մեջբերում, տեսական նյութերի ընդլայնում	14	17,7%

3.	Դասավանդման մեթոդների բարելավում (ծրագրին նախնական ծանոթացում, նյութի մատչելի մատուցում, դասավանդումը հիմնված լինի դասավանդման ժամանակակից մոտեցումների վրա, կիրառվեն նոր տեսահոլովակներ, կոնստրուկցիաների եռաչափ մոդելներ, գրականության տրամադրում)	9	11,4%
4.	Տեսական և գործնական ժամերի ավելացում և դրանց հարաբերակցության ճիշտ պլանավորում	7	8,9%
5.	Լսարանային պայմանների բարելավում (համապատասխան լսարանների լաբորատորիաների ապահովում)	6	7,6%
6.	Տեխնիկական միջոցների կիրառման ընդլայնում (համակարգիչների ավելի լայն կիրառում, տեսահոլովակների ցուցադրում)	5	6,3%
7.	Դասախոսի մասնագիտական մակարդակի բարձրացում, պրակտիկային մոտ դասախոսների ներգրավում	4	5,1%
8.	Ուսանողների գիտելիքների անկողմնակալ գնահատում, դասախոսի արձագանքում ուսանողի կարիքներին, անհատական մոտեցում	3	3,8%
9.	Շինարարական հրապարակների հաճախակի այցելություններ	2	2,5%
10.	Խմբերի տրոհում ավելի փոքր խմբերով գործնական պարապմունքները անցկացնելու նպատակով	2	2,5%
	Ընդամենը	79	100%

«Դիզայն նախագիծ» առարկա			
Ընդհանուր վիճակագրական տվյալներ			
		ակադեմիական խմբերի թիվ	6
		ուսանողների թիվ	111
		հարցմանը մասնակցած ուսանողների թիվ	74
		հարցմանը մասնակցած ուսանողների %	66,7%
		դասընթացի լավագույն հատկանիշները նշած ուսանողների թիվը	48 (կամ 64,9% հարցմանը մասնակցած ուսանողների թվից)
		նշված լավագույն հատկանիշների ընդհանուր թիվը	56
		բարելավման ուղիները նշած ուսանողների թիվը	52 (կամ 70,3% հարցմանը մասնակցած ուսանողների թվից)
		նշված բարելավման ուղիների թիվը	86
h/h	Լավագույն հատկանիշները	Կարծիք արտահայտողներ	
		թիվ	%
1.	Տրվում են գիտելիքներ դիզայնի ոլորտում, նույն թվում օտարերկրյա դիզայնի մասին, նորարարական գաղափարներ, առարկան մասնագիտական է և դրա պատճառով անհրաժեշտ	16	28,6%
2.	Գործնական պարապմունքներին տրվում են հետաքրքիր առաջադրանքներ, իրականացվում են էսքիզների քննարկումներ	13	23,2%
3.	Ձեռք է բերվում պրակտիկ հմտություն և փորձ դիզայնում, ձևավորվում է դիզայնի երևակայություն և մտածելակերպ, մտքի զարգացում, մասնագետների հետ շփում	13	23,2%
4.	Դասախոսների անմիջականությունը, պահանջկոտությունը, ազատ ստեղծագործելու մթնոլորտի ստեղծումը, ինքնուրույն գործելու հնարավորություններ, անկողմնակալ վերաբերմունք ուսանողի նկատմամբ	10	17,9%
5.	Դասախոսների դասավանդման մեթոդները ապահովում են նյութի հեշտ ընկալում	4	7,1%
		Ընդամենը	56
			100%
h/h	Բարելավման ուղղությունները		
1.	Դասախոսի մասնագիտական որակի բարձրացում, ներառվեն ոլորտի հայտնի մասնագետներ, դասախոսները լինեն ավելի փորձառու, պարտաճանաչ, սրտացավ և նրբանկատ ուսանողի նկատմամբ, անկողմնակալ աշխատեն բոլոր ուսանողների հետ, պահպանեն լսարանի համար վայել վարքագիծ (օրինակ՝ հաց չուտեն դասի ժամանակ)	21	24,7%

2.	Ավելի հստակ լինեն ծրագրերը, դասընթացների ժամանակ տրամադրվող նյութի ծավալը մեծացվի, կիրառվեն կոնկրետ օրինակներ, ընդլայնվի միջազգային փորձի ուսումնասիրությունը	14	16,5%
3.	Գործնական պարապմունքների ժամանակ անցկացվեն կլաուզուրաներ կամ հետաքրքիր առաջադրանքներ տրվեն, մակետային աշխատանքներ կատարելու համար ստեղծվեն համապատասխան պայմաններ, ընդլայնվի առաջադրանքների քանակը, պրակտիկ գործունեությանը ավելի շատ ուշադրություն դարձվի, ընդլայնվեն քննարկումները, գործնականների համար խումբը բաժանվի ավելի փոքր խմբերի	11	12,9%
4.	Կուրսային նախագծերի բովանդակության բարելավում, ավելի շատ գրականության տրամադրում, առաջադրանքների անփոփոխություն, պրեզենտացիաների կազմակերպում	11	12,9%
5.	Դասընթացների ճիշտ կազմակերպում՝ ըստ հստակ ուսումնական պլանների, ուսումնական պլանների կազման ընթացքում հաշվի առնեն ուսանողների կարծիքները, դասընթացները կազմակերպվեն ավելի հետաքրքիր	9	10,6%
6.	Դասավանդման մեթոդները ապահովեն նյութի հեշտ ընկալումը, քննարկվեն նախագծերի թվայնացված տարբերակները, կազմակերպվեն ավելի ակտիվ քննարկումներ, ստեղծվի ինքնուրույնության հնարավորություններ	8	9,4%
7.	Դասընթացների և գործնականների ժամերի քանակի մեծացվի և հստակեցվի դրանց ճիշտ հարաբերակցությունը	7	8,2%
8.	Գիտելիքների գնահատման կարգի փոփոխվում, դասախոսի կողմից անկողմնակալ գնահատում	4	4,7%
	Ընդամենը	85	100%

«Միջավայրի ճարտարապետություն և դիզայն նախագիծ» առարկայի դասընթացը			
Ընդհանուր վիճակագրական տվյալներ			
ակադեմիական խմբերի թիվ		6	
ուսանողների թիվ		91	
հարցմանը մասնակցած ուսանողների թիվ		54	
հարցմանը մասնակցած ուսանողներ %		59,3%	
դասընթացի լավագույն հատկանիշները նշած ուսանողների թիվը		30 (կամ 55,6% հարցմանը մասնակցած ուսանողների թվից)	
նշված լավագույն հատկանիշների ընդհանուր թիվը		30	
բարելավման ուղիները նշած ուսանողների թիվը		30 (կամ 55.6% հարցմանը մասնակցած ուսանողների թվից)	
նշված բարելավման ուղիների թիվը		41	
h/h	Լավագույն հատկանիշները	Կարծիք արտահայտողներ	
		թիվ	%
1.	Գիտելիքների տրամադրում, զարգացնում է մտահորիզոնը, մասնագիտական առարկա է	12	40,0%
2.	Գործնականների ժամանակ հմտացում ճարտարապետության ոլորտում, ձեռք է բերվում պրակտիկ փորձ, լավ կազմակերպված կլաուզուրաների պարբերական անցկացում, խմբակային աշխատանքների կատարում, առաջադրանքների հստակ փուլեր, ծանոթացում ճարտարապետական նախագծման հետ	10	33,3%
3.	Լավ կազմակերպված ծրագիր, պլանավորված դասընթացներ	4	13,3%
4.	Դասախոսների կողմից լուրջ և անկողմնակալ վերաբերմունք ուսանողի նկատմամբ	4	13,3%
	Ընդամենը	30	100%
h/h	Բարելավման ուղղությունները		
1.	Դասաժամերը ավելացվեն	4	36,4%
2.	Ավելի շատ նյութեր և օրինակներ ուսումնասիրվեն դասախոսների հետ	3	27,3%
3.	Պահպանվի նույն դասախոսական կազմը, դասախոսները ավելի շատ ներկա լինեն դասերին	2	18,2%
4.	Ավելի հետաքրքիր լինեն առաջադրանքները	1	9,1%
5.	Բարելավվեն լաբորատորիաների և լսարանների պայմանները	1	9,1%
	Ընդամենը	11	100%

«Քաղաքային տնտեսության էկոնոմիկա» առարկայի դասընթացը			
Ընդհանուր վիճակագրական տվյալներ			
		ակադեմիական խմբերի թիվ	2
		ուսանողների թիվ	26
		հարցմանը մասնակցած ուսանողների թիվ	19
		հարցմանը մասնակցած ուսանողների %	73.1%
		դասընթացի լավագույն հատկանիշները նշած ուսանողների թիվը	18 (կամ 94,7% հարցմանը մասնակցած ուսանողների թվից)
		նշված լավագույն հատկանիշների ընդհանուր թիվը	35
		բարելավման ուղիները նշած ուսանողների թիվը	7 (կամ 36,8% հարցմանը մասնակցած ուսանողների թվից)
		Նշված բարելավման ուղիների թիվը	12
h/h	Լավագույն հատկանիշները	Կարծիք արտահայտողներ	
		թիվ	%
1.	Գործնական պարապմունքների ժամանակ գործնական և ուսուցողական խաղերի անցկացում, թիմային աշխատանքների կազմակերպում	10	28,6%
2.	Դասախոսի դասավանդման մեթոդները (երկխոսությունների, քննարկումների և բանավեճերի միջոցով դասի անցկացում, գիտելիքների փոխանցում գործնական խաղերի միջոցով, բոլոր ուսանողների ներգրավումը դասընթացի մեջ, պրակտիկ օրինակների լայն կիրառում)	9	25,7%
3.	Դասախոսը հետաքրքիր, խելացի և բանիմաց անձնավորություն է, ունի հաղորդակցության բարձր մակարդակ, աղատ հաղորդակցվում է ուսանողների հետ , ցուցաբերում է անկողմնակալ վերաբերմունք ուսանողի նկատմամբ, անմիջական է	9	25,7%
4.	Տրամադրվում են անհրաժեշտ և բավարար գիտելիքներ և հմտություններ, անհրաժեշտ նյութեր	4	11,4%
5.	Դասընթացները բովանդակալից են և անց են կացվում հետաքրքիր և մատչելի ձևով	3	8,6%
		Ընդամենը	35 100%
h/h	Բարելավման ուղղությունները		
1.	Բարելավվեն լսարանային պայմանները (լսարանները լինեն ավելի մեծ, սեղանները ավելի շատ լինեն, տարվա ցուրտ ամիսներին ավելի լավ ջեռուցվեն, )	6	50,0%
2.	Տեսական և գործնական դասաժամերի ավելացում	4	33,3%
3.	Կազմակերպվեն պրակտիկաներ	1	8,3%
4.	Խմբերում ներգրավված ուսանողների թիվը նվազեցվի	1	8,3%
		Ընդամենը	12 100%

«Հաշվապահական հաշվառում» առարկայի դասընթացը			
Ընդհանուր վիճակագրական տվյալներ			
ակադեմիական խմբերի թիվ		2	
ուսանողների թիվ		26	
հարցմանը մասնակցած ուսանողների թիվ		19	
հարցմանը մասնակցած ուսանողների %		73.1%	
դասընթացի լավագույն հատկանիշները նշած ուսանողների թիվը		1 (կամ 5,2% հարցմանը մասնակցած ուսանողների թվից)	
նշված լավագույն հատկանիշների ընդհանուր թիվը		1	
բարելավման ուղիները նշած ուսանողների թիվը		10 (կամ 52.6% հարցմանը մասնակցած ուսանողների թվից)	
նշված բարելավման ուղիների թիվը		14	
h/h	Լավագույն հատկանիշները	Կարծիք արտահայտողներ	
		թիվ	%
1.	Գիտելիքների ձեռք բերում	1	100%
	Ընդամենը	1	100%
h/h	Բարելավման ուղղությունները		
1.	Դասախոսը կանոնավոր և պարտադիր ներկայանար իր դասաժամերին	8	57,1%
2.	Դասաժամերը անցկացվեին համալսարանում	3	21,4%
3.	Տեսական և գործնական դասաժամերի քանակի ավելացում	2	14,3%
4.	Նյութը բացատրվեր ավելի մատչելի ձևով	1	7,1%
	Ընդամենը	14	100%

**Հավելված 1.**

**Ուսանողի կողմից դասընթացի գնահատման հարցաթերթ**

- *Լրացվում է ամեն ուսանողի կողմից, ամեն դասընթացի ավարտին,*
- *Խնդրում ենք տրամադրել ձեր անկեղծ կարծիքը, որը կօգնի բարելավել դասընթացի և դրա մատուցման մեթոդների որակը,*
- *Երաշխավորում ենք տրամադրված տվյալների գաղտնիությունը:*

B. Ֆակուլտետ՝ \_\_\_\_\_ E. Կիսամյակ՝ \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_ F. Դասընթացի անվանում՝ \_\_\_\_\_

C. Կուրս, խումբ՝ \_\_\_\_\_

D. Մագիստրատուրա , Բակալավրիատ  G. Դասախոս՝ \_\_\_\_\_

H. Սեռ՝ արական  իգական  I. Տարիք՝ մինչև 20 տ.  21-25 տ.   
 25տ.-ից բարձր

**Ամեն հարցի համար ընտրեք մեկ պատասխան՝ ներառելով այն շրջանակի մեջ:**

1. Ինչպիսի՞ն է Ձեր ընդհանուր գնահատականը դասընթացի վերաբերյալ (գնահատեք չորս բալանոց սանդղակով՝ 1-շատ վատ, 2-վատ, 3 –լավ, 4 –գերազանց, 0 – չեմ կարող գնահատել):

1.	2.	3.	4.	0.
----	----	----	----	----

2. Դասընթացը կարևորում էմ իմ մասնագիտական զարգացման՝ անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ձեռք բերման տեսանկյունից:

1 միանշանակ ոչ	2 ավելի շատ ոչ քան այո	3 ավելի շատ այո քան ոչ	4 միանշանակ այո	0 չեմ կարող գնահատել
-------------------	---------------------------	---------------------------	--------------------	-------------------------

3. Դասընթացի նպատակները և վերջնարդյունքները հստակ էին և ես ի սկզբանե տեղեկացվել էի դրանց մասին:

1 միանշանակ ոչ	2 ավելի շատ ոչ քան այո	3 ավելի շատ այո քան ոչ	4 միանշանակ այո	0 չեմ կարող գնահատել
-------------------	---------------------------	---------------------------	--------------------	-------------------------

4. Ուսուցման մեթոդները՝ դասախոսությունները, գործնական պարապմունքները, առաջադրանքները խթանում էին ակնկալվող գիտելիքների և հմտությունների ձեռք բերումը :

1 միանշանակ ոչ	2 ավելի շատ ոչ քան այո	3 ավելի շատ այո քան ոչ	4 միանշանակ այո	0 չեմ կարող գնահատել
-------------------	---------------------------	---------------------------	--------------------	-------------------------

5. Դասախոսությունների և գործնական պարապմունքների հարաբերակցությունը ճիշտ էր կազմակերպված :

1 միանշանակ ոչ	2 ավելի շատ ոչ քան այո	3 ավելի շատ այո քան ոչ	4 միանշանակ այո	0 չեմ կարող գնահատել
-------------------	---------------------------	---------------------------	--------------------	-------------------------



6. Համալսարանում ստեղծված պայմանները (լսարանների, լաբորատորիաների որակը և տեխնիկական զինվածությունը, գրադարանի մատչելիությունը և այլն) բավարար էին բարձրորակ գիտելիքներ ձեռք բերելու համար

1 միանշանակ ոչ	2 ավելի շատ ոչ քան այո	3 ավելի շատ այո քան ոչ	4 միանշանակ այո	0 չեմ կարող գնահատել
-------------------	---------------------------	---------------------------	--------------------	-------------------------

7. Գործնական և լաբորատոր պարապմունքները նպաստեցին ձեռք բերված տեսական գիտելիքների ամրապնդմանը:

1 միանշանակ ոչ	2 ավելի շատ ոչ քան այո	3 ավելի շատ այո քան ոչ	4 միանշանակ այո	0 չեմ կարող գնահատել
-------------------	---------------------------	---------------------------	--------------------	-------------------------

8. Քննությանը նախապատրաստվելու համար նախատեսված նյութերը համապատասխան էին և հասանելի:

1 միանշանակ ոչ	2 ավելի շատ ոչ քան այո	3 ավելի շատ այո քան ոչ	4 միանշանակ այո	0 չեմ կարող գնահատել
-------------------	---------------------------	---------------------------	--------------------	-------------------------

9. Դասախոսը քաջալերում էր ուսանողների հետ ազատ հաղորդակցությունը, քննարկումները և բանավեճերը:

1 միանշանակ ոչ	2 ավելի շատ ոչ քան այո	3 ավելի շատ այո քան ոչ	4 միանշանակ այո	0 չեմ կարող գնահատել
-------------------	---------------------------	---------------------------	--------------------	-------------------------

10. Ուսանողների գիտելիքները գնահատվել են օբյեկտիվ և անկողմնակալ:

1 միանշանակ ոչ	2 ավելի շատ ոչ քան այո	3 ավելի շատ այո քան ոչ	4 միանշանակ այո	0 չեմ կարող գնահատել
-------------------	---------------------------	---------------------------	--------------------	-------------------------

11. Դասախոսը ժամանակին էր արձագանքում ուսանողների կարիքներին և խնդիրներին:

1 միանշանակ ոչ	2 ավելի շատ ոչ քան այո	3 ավելի շատ այո քան ոչ	4 միանշանակ այո	0 չեմ կարող գնահատել
-------------------	---------------------------	---------------------------	--------------------	-------------------------

12. Այս դասընթացին իմ հաճախելիությունը կազմել է \_\_\_\_\_ %:

13. Այս դասընթացի առաջադրանքներին պատրաստվելու համար դասից դուրս շաբաթական ծախսել եմ միջինը \_\_\_\_\_ ժամ:

14. Այս դասընթացի լավագույն հատկանիշներն էին՝

1. \_\_\_\_\_
2. \_\_\_\_\_

15. Այս դասընթացը կարող էր բարելավվել, եթե՝

1. \_\_\_\_\_
2. \_\_\_\_\_

16. Այլ ցանկություններ, առաջարկներ և մեկնաբանություններ՝

1. \_\_\_\_\_
2. \_\_\_\_\_

Հավելված 2.

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՑՑ

Ուսանողների կողմից դասընթացների գնահատման 2016թ. հունվար-փետրվար ամիսներին անցկացված հարցումների

h/h	Դասընթացի անվանում (դասախոսի անուն, ազգանունը)	Խումբ	Ուսանողների թիվ	Հարցման անցկացման			Հարցմանը մասնակցած ուսանողների թիվ	Մասնակիցների թիվը, %-ով
				ամսաթիվ	լսարան	Ժամ		
<b>Ճարտարապետության ֆակուլտետ</b>								
I	Ճարտարապետական նախագծման և ճարտարապետական միջավայրի դիզայնի ամբիոն							
1.	Ճարտարապետական կոնստրուկցիաներ	4-րդ կուրս						
		Ճ 21-1	27	27.01.16	2417	11:00	18	67%
		Ճ 21-2	27	27.01.16	2417	11:00	13	48%
		Ճ 21-3	25	26.01.16	2107	11:00	12	48%
		Ճ 21-4	23	26.01.16	2107	11:00	15	65%
2.	Ճարտարապետական նախագծում	4-րդ կուրս						
		Ճ 21-1	27	27.01.16	2417	11:00	15	56%
		Ճ 21-2	27	27.01.16	2417	11:00	16	59%
		Ճ 21-3	25	26.01.16	2107	11:00	12	48%
		Ճ 21-4	23	26.01.16	2107	11:00	15	65%
<b>Կառավարման և տեխնոլոգիայի ֆակուլտետ</b>								
II	Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման ամբիոն							
3.	Քաղաքային տնտեսության էկոնոմիկա և							

	կառավարում							
		Է-22	13	27.01.16	2416	15:45	7	54%
		Է-25	13	27.01.16	2416	15:45	12	77%
4.	Անշարժ գույքի գնահատում և հարկում	ԷՄ-44	5	26.01.16	2417	13:10-14:45	5	100%
5.	Շինարարության էկոնոմիկա	Է-21	28	23.02.16	2417	13:10	15	54%
6.	Բնապահպանության էկոնոմիկա	Է-23	2	27.01.16	2412	13:10	2	100%
7.	Հաշվապահական հաշվառում շինարարության ոլորտում	Է-22	13	27.01.16	2416	15:45	7	62%
		Է-25	13	27.01.16	2416	15:45	12	69%
<b>Դիզայնի և զբոսաշրջության ֆակուլտետ</b>								
III.	Դիզայնի ամբիոն							
8.	Դիզայն նախագիծ	3-րդ կ.						
		Դ 35-1	17	23.02.16	2208	15:00	5	29%
		Դ 35-2	13	23.02.16	2208	15:00	6	46%
		Դ 35-3	19	10.02.16	2407	11:00	16	84%
		Դ 35-4	22	10.02.16	2407	11:00	13	59%
		Դ 35-5	20	17.02.16	2406	12:00	18	90%
		Դ 31	20	11.02.16	2410	15:00	16	80%
IV.	Դիզայն միջավայրի նախագծման ամբիոն							
9.	Միջավայրի ճարտարապետություն և դիզայն նախագիծ	3-րդ կ.						
		Դ 35-1	17	23.02.16	2208	15:00	5	29%
		Դ 35-2	13	23.02.16	2208	15:00	6	46%
		Դ 35-3	19	10.02.16	2407	11:00	16	84%

		Դ 35-4	22	10.02.16	2407	11:00	13	59%
		Դ 35-5	20	17.02.16	2406	12:00	14	70%
<b>Շինարարության ֆակուլտետ</b>								
V.	Շինարարական կոնստրուկցիաների ամբիոն	4-րդ կուրս						
10.	Երկաթբետոնե կոնստրուկցիաներ	Ա 21-1	30	24.02.16	2101	13:30	13	43%
11.	Շին.ինդուստրիայի ձեռնարկությունների նախագծում	Ա 21-2	8	24.02.16	2101	13:30	2	25%
VI.	Ինժեներական գեոդեզիայի ամբիոն							
12.	Հողային և բազմանպատակային կադաստր	Ա 33	5	24.02.16	17303	11:00-14:45	4	80%
13.	Բարձրագույն գեոդեզիա	Ա 33	5	24.02.16	17303	11:00-14:45	4	80%
<b>Քաղաքային տնտեսության և էկոլոգիայի ֆակուլտետ</b>								
VII.	Շին. Մեքենաների և երթևեկության կազմակերպման ամբիոն							
14.	ՃԷԿ տեխնիկական միջոցներ	Տ 22	6	23.02.16	17303	13:30	6	100%
VIII.	Գեոէկոլոգիայի և կենսաանվտանգության ամբիոն							
15.	Էկոլոգիական փորձաքննություն	Չ 23	3	23.02.16	ամբիոն	15:00	1	33%
	Ընդամենը		550				330	60%

**Հավելված 3. Ուսանողների կողմից մասնագիտական առարկաների դասընթացների գնահատման արդյունքում ստացված միջինացված գնահատականները**

h/h	<b>Հարցաթերթի հարցերը</b>	Ճարտարապետության ֆակուլտետ		Դիզայնի և զբոսաշրջության ֆակուլտետ			
		Ճարտարապետական նախագծման և Ճարտարապետական միջավայրի դիզայնի ամբիոն		Դիզայնի ամբիոն	Դիզայն միջավայրի նախագծման ամբիոն		
		Առարկաները		Առարկաները			
		Ճարտարապետական նախագծում	Ճարտարապետական կոնստրուկցիաներ	Դիզայն նախագիծ	Միջավայրի ճարտարապետ. և դիզայն նախագիծ		
ա/	Դասընթացը գնահատող ակադեմիական խմբերի թիվը	4	4	6	5		
բ/	Դասընթացը գնահատող ակադեմիական խմբերում ուսանողների ընդհանուր թիվը	102	102	111	91		
գ/	Հարցմանը մասնակցած ուսանողների թիվը	58	58	74	54		
դ/	Հարցմանը մասնակցած ուսանողների թիվը, %	56,8%	56,8%	66,7%	59,3%		
1	Ինչպիսի՞ն է Ձեր ընդհանուր գնահատականը դասընթացի վերաբերյալ	3,4	2,9	2,7	3,4		
2	Դասընթացը կարևորում եմ իմ մասնագիտական զարգացման՝ անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ձեռք բերման տեսանկյունից:	3,8	3,5	3,4	3,8		
3	Դասընթացի նպատակները և վերջնարդյունքները հստակ էին և ես ի սկզբանե տեղեկացվել էի դրանց մասին	3,4	3,0	2,5	3,8		
4	Ուսուցման մեթոդները՝ դասախոսությունները, գործնական պարապմունքները, առաջադրանքները խթանում էին ակնկալվող գիտելիքների և հմտությունների	3,2	2,6	2,4	3,2		

	ձեռք բերումը				
5	Դասախոսությունների և գործնական պարապմունքների հարաբերակցությունը ճիշտ էր կազմակերպված	2,9	2,6	2,1	3,5
6	Համալսարանում ստեղծված պայմանները (լսարանների, լաբորատորիաների որակը և տեխնիկական զինվածությունը, գրադարանի մատչելիությունը և այլն) բավարար էին բարձրորակ գիտելիքներ ձեռք բերելու համար	2,2	1,9	2,1	2,7
7	Գործնական և լաբորատոր պարապմունքները նպաստեցին ձեռք բերված տեսական գիտելիքների ամրապնդմանը	2,8	2,3	2,2	3,3
8	Քննությանը նախապատրաստվելու համար նախատեսված նյութերը համապատասխան էին և հասանելի	2,9	2,7	2,5	3,5
9	Դասախոսը քաջալերում էր ուսանողների հետ ազատ հաղորդակցությունը, քննարկումները և բանավեճերը	3,7	3,1	3,1	3,7
10	Ուսանողների գիտելիքները գնահատվել են օբյեկտիվ և անկողմնակալ	3	2,7	2,0	3,2
11	Դասախոսը ժամանակին էր արձագանքում ուսանողների կարիքներին և խնդիրներին	3,5	3,1	2,8	3,6
12	Այս դասընթացին իմ հաճախելիությունը կազմել է (%)	93,1	91,6	86,8	91,6
13	Այս դասընթացի առաջադրանքներին պատրաստվելու համար դասից դուրս շաբաթական ծախսել եմ միջինը (ժամ)	19,4	9,7	12,8	18,8

h/h	Հարցաթերթի հարցերը	Տեխնոլոգիայի և կառավարման ֆակուլտետ				
		Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման ամբիոն				
		Առարկաները				
		Քաղաքային տնտեսության էկոնոմիկա և կառավարում	Անշարժ գույքի գնահատում և հարկում	Բնապահպանության էկոնոմիկա	Հաշվապահական հաշվառում շինարարության ոլորտում	Շինարարության էկոնոմիկա
ա/	Դասընթացը գնահատող ակադեմիական խմբերի թիվը	2	1	1	2	1
բ/	Դասընթացը գնահատող ակադեմիական խմբերում ուսանողների ընդհանուր թիվը	26	5	2	26	28
գ/	Հարցմանը մասնակցած ուսանողների թիվը	17	5	2	17	15
դ/	Հարցմանը մասնակցած ուսանողների թիվը, %	65%	100%	100%	65%	54%
1	Ինչպիսի՞ն է Ձեր ընդհանուր գնահատականը դասընթացի վերաբերյալ	3,7	3,8	3	2,4	3,3
2	Դասընթացը կարևորում եմ իմ մասնագիտական զարգացման՝ անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ձեռք բերման տեսանկյունից:	3,5	4	2,5	2,9	3,5
3	Դասընթացի նպատակները և վերջնարդյունքները հստակ էին և ես ի սկզբանե տեղեկացվել էի դրանց մասին	3,7	3,4	3	1,9	3,4
4	Ուսուցման մեթոդները՝ դասախոսությունները, գործնական պարապմունքները, առաջադրանքները խթանում էին ակնկալվող գիտելիքների և հմտությունների ձեռք բերումը	3,9	3,6	3,5	1,9	3,3

5	Դասախոսությունների և գործնական պարապմունքների հարաբերակցությունը ճիշտ էր կազմակերպված	3,8	3,3	3	1,6	2,9
6	Համալսարանում ստեղծված պայմանները (լսարանների, լաբորատորիաների որակը և տեխնիկական զինվածությունը, գրադարանի մատչելիությունը և այլն) բավարար էին բարձրորակ գիտելիքներ ձեռք բերելու համար	2,9	2,8	3,5	2,0	3,1
7	Գործնական և լաբորատոր պարապմունքները նպաստեցին ձեռք բերված տեսական գիտելիքների ամրապնդմանը	3,8	3,2	2,5	1,7	3,1
8	Քննությանը նախապատրաստվելու համար նախատեսված նյութերը համապատասխան էին և հասանելի	3,9	4	3	2,3	3,6
9	Դասախոսը քաջալերում էր ուսանողների հետ ազատ հաղորդակցությունը, քննարկումները և բանավեճերը	3,8	4	4	1,9	3,5
10	Ուսանողների գիտելիքները գնահատվել են օբյեկտիվ և անկողմնակալ	3,7	3,8	4	2,8	3,4
11	Դասախոսը ժամանակին էր արձագանքում ուսանողների կարիքներին և խնդիրներին	3,9	4	2	2,6	3,6
12	Այս դասընթացին իմ հաճախելիությունը կազմել է (%)	94,4	82	72,5	80,6	84,4
13	Այս դասընթացի առաջադրանքներին պատրաստվելու համար դասից դուրս շաբաթական ծախսել եմ միջինը (ժամ)	4,3	1,8	7	4,5	14,2



h/h	Հարցաթերթի հարցերը	Շինարարության ֆակուլտետ			
		Շինարարական կոնստրուկցիաների ամբիոն		Ինժեներական գեոդեզիայի ամբիոն	
		Առարկաները		Առարկաները	
		Ե/բ կոնստրուկցիաներ	Շին.ինդ.ձեռնարկ.և ախագծում	Հողային և բազմապատակային կադաստր	Բարձրագույն գեոդեզիա
ա/	Դասընթացը գնահատող ակադեմիական խմբերի թիվը	1	1	1	1
բ/	Դասընթացը գնահատող ակադեմիական խմբերում ուսանողների ընդհանուր թիվը	30	8	5	5
գ/	Հարցմանը մասնակցած ուսանողների թիվը	13	2	4	4
դ/	Հարցմանը մասնակցած ուսանողների թիվը, %	43%	25%	80%	80%
1	Ինչպիսի՞ն է Ձեր ընդհանուր գնահատականը դասընթացի վերաբերյալ	4,0	3,5	4,0	4,0
2	Դասընթացը կարևորում եմ իմ մասնագիտական զարգացման՝ անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ձեռք բերման տեսանկյունից:	4,0	4,0	4,0	3,8
3	Դասընթացի նպատակները և վերջնարդյունքները հստակ էին և ես ի սկզբանե տեղեկացվել էի դրանց մասին	3,9	4,0	3,5	3,8
4	Ուսուցման մեթոդները՝ դասախոսությունները, գործնական պարապմունքները, առաջադրանքները խթանում էին ակնկալվող գիտելիքների և հմտությունների ձեռք բերումը	3,9	3,5	3,3	2,8
5	Դասախոսությունների և գործնական պարապմունքների հարաբերակցությունը ճիշտ էր կազմակերպված	4,0	4,0	3,8	4,0

6	Համալսարանում ստեղծված պայմանները (լսարանների, լաբորատորիաների որակը և տեխնիկական զինվածությունը, գրադարանի մատչելիությունը և այլն) բավարար էին բարձրորակ գիտելիքներ ձեռք բերելու համար	3,6	3,0	3,5	3,8
7	Գործնական և լաբորատոր պարապմունքները նպաստեցին ձեռք բերված տեսական գիտելիքների ամրապնդմանը	3,8	4,0	4,0	4,0
8	Քննությանը նախապատրաստվելու համար նախատեսված նյութերը համապատասխան էին և հասանելի	4,0	4,0	4,0	4,0
9	Դասախոսը քաջալերում էր ուսանողների հետ ազատ հաղորդակցությունը, քննարկումները և բանավեճերը	4,0	4,0	4,0	4,0
10	Ուսանողների գիտելիքները գնահատվել են օբյեկտիվ և անկողմնակալ	4,0	4,0	4,0	3,8
11	Դասախոսը ժամանակին էր արձագանքում ուսանողների կարիքներին և խնդիրներին	3,9	4,0	4,0	3,8
12	Այս դասընթացին իմ հաճախելիությունը կազմել է (%)	93,5	100	99,5	92,3
13	Այս դասընթացի առաջադրանքներին պատրաստվելու համար դասից դուրս շաբաթական ծախսել եմ միջինը (ժամ)	5,0	6	10	3,5

Խ/Խ	Հարցաթերթի հարցերը	Քաղաքային տնտեսության և էկոլոգիայի ֆակուլտետ	
		Շին. մեքենաների և երթևեկության կազմակերպման ամբիոն	Գեոէկոլոգիայի և կենսաանվտանգության ամբիոն
		Առարկաներ	
		ՃԷԿ տեխնիկական միջոցներ	Էկոլոգիական փորձաքննություն
ա/	Դասընթացը գնահատող ակադեմիական խմբերի թիվը	1	1
բ/	Դասընթացը գնահատող ակադեմիական խմբերում ուսանողների ընդհանուր թիվը	6	3
գ/	Հարցմանը մասնակցած ուսանողների թիվը	6	1
դ/	Հարցմանը մասնակցած ուսանողների թիվը, %	100%	33%
1	Ինչպիսի՞ն է Ձեր ընդհանուր գնահատականը դասընթացի վերաբերյալ	4,0	4,0
2	Դասընթացը կարևորում եմ իմ մասնագիտական զարգացման՝ անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ձեռք բերման տեսանկյունից:	3,8	4,0
3	Դասընթացի նպատակները և վերջնարդյունքները հստակ էին և ես ի սկզբանե տեղեկացվել էի դրանց մասին	3,8	4,0
4	Ուսուցման մեթոդները՝ դասախոսությունները, գործնական պարապմունքները, առաջադրանքները խթանում էին ակնկալվող գիտելիքների և հմտությունների ձեռք բերումը	3,2	3,0
5	Դասախոսությունների և գործնական պարապմունքների հարաբերակցությունը ճիշտ էր կազմակերպված	3,8	4,0
6	Համալսարանում ստեղծված պայմանները (լսարանների, լաբորատորիաների որակը և տեխնիկական զինվածությունը, գրադարանի մատչելիությունը և այլն) բավարար էին բարձրորակ գիտելիքներ ձեռք բերելու համար	2,8	3,0

7	Գործնական և լաբորատոր պարապմունքները նպաստեցին ձեռք բերված տեսական գիտելիքների ամրապնդմանը	3,3	4,0
8	Քննությանը նախապատրաստվելու համար նախատեսված նյութերը համապատասխան էին և հասանելի	3,7	4,0
9	Դասախոսը քաջալերում էր ուսանողների հետ ազատ հաղորդակցությունը, քննարկումները և բանավեճերը	3,7	4,0
10	Ուսանողների գիտելիքները գնահատվել են օբյեկտիվ և անկողմնակալ	3,8	4,0
11	Դասախոսը ժամանակին էր արձագանքում ուսանողների կարիքներին և խնդիրներին	4,0	3,0
12	Այս դասընթացին իմ հաճախելիությունը կազմել է (%)	92,8	100
13	Այս դասընթացի առաջադրանքներին պատրաստվելու համար դասից դուրս շաբաթական ծախսել եմ միջինը (Ժամ)	7,7	8